

# ՍԵՎՐԻ ԳԱՆՆԱԳՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՇԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հայոց Մայիսյան Հաղթանակների տոնական միջոցառումների շրջանակներում սպայական անձնակազմի հետ հետաքրքիր հանդիպում էր կազմակերպված Կանադայում Հայաստանի Հանրապետության նախկին արտակարգ և լիազոր դեսպան Արա Պապյանի հետ: «Սարդարապատի հերոսամարտը». Սևրի դաշնագիրը և դրա իրավական հետևանքները, քննադով զեկուցման մեջ պարոն Պապյանը հանգամանորեն ներկայացրեց 20-րդ դարասկզբի մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությունը դարերով կորուսյալ Հայոց պետականության վերականգնման գործում: Ա. Պապյանը հատկապես կարևորեց միջազգային իրավունքի տեսանկյունից 1920թ. օգոստոսի 10-ին բազմաթիվ երկրների կողմից վավերացված Սևրի պայմանագրի արդի ժամանակներում կիրառելիությունը՝ հերքելով այն բոլոր կարծիքը, իբր այդ դաշնագիրն այլևս անվավեր է և պատկանում է պատմությանը:

Բանախոսը մանրամասնորեն կանգ առավ նաև մարդկային և նյութական այն վիթխարի կորուստների վրա, որ կրեց հայ ժողովուրդը 1915-1923թթ. Մեծ եղեռնի ժամանակ: Անվիճելի է, որ ցեղասպանության ամացյալ նպատակներից է եղել հայերի անհատական և հավաքական սեփականության յուրացումը: Այս առումով միջազգային իրավունքը միանգամայն հստակ հռչակում է. «Հանցագործը չպիտի վայելի իր հանցագործության պատուները»: Այլ խոսքով, հանցագործության հետևանքները չեն կարող ճանաչվել կամ օրինականացվել, որքան էլ ժամանակ անցնի:

Աշխարհապիտո հայությունն ու ողջ քաղաքակիրթ աշխարհը դեռևս սպասում են ոճրապարտ Թուրքիայի պատասխանին. ցեղասպանությունը պիտի ճանաչվի և վնասները պիտի հատուցվեն: Ընդ որում, 1919թ. Փարիզի Խաղաղության վեհաժողովի շրջանակներում կազմված Հատուկ հանձնախմբի մեկամսյա հաշվարկների արդյունքում պարզվեց, որ հայության նյութական կորուստները այսօրվա վերահաշվարկով կազմում են տասնյակ (գուցե՝ հարյուր) միլիարդավոր ԱՄՆ դոլար:


Որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ՝ ներկայիս Թուրքիայի Հանրապետությունն ունի միջազ-

գային իրավական պարտավորություններ: Իսկ համաձայն միջազգային իրավունքի, հանցագործությունների համար պատասխանատվությունն ընկնում է դրանք իրականացրած երկրի վրա, ինչպես նաև, ըստ շարունակության և պատասխանատվության սկզբունքի՝ դրա իրավահաջորդի: Ի դեպ փոխհատուցումների հարցով անհրաժեշտ է առանձնացնել մի կարևոր հանգամանք և՛ ժամանակի գործոնը բնավ հիմք չէ նյութական պարտավորություններից խուսափելու համար: Այսպես, Ֆինլանդիան ԱՄՆ-ի նկատմամբ առաջին համաշխարհային պատերազմից մնացած իր նյութական պարտավորությունների կատարումն ամբողջացրեց միայն 1969թ. -ին:

Սակայն 1920թ. դեկտեմբերին Զեմալական Թուրքիայի և Բոլշևիկյան Ռուսաստանի ունձգությունները անհնար դարձրին Հայաստանի առաջին Հանրապետության՝ Ուիլսոնի բարտեզում ամրագրված և իրավականորեն միջազգայնորեն հաստատված սահմանների «ողորմ վրա նշանակելու» գործընթացը: Հայաստանի առաջին անկախ Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալ՝ մտնելով ԽՍՀՄ կազմի մեջ, իսկ Թուրքիան և ԽՍՀՄ-ը կամայական սահման գծեցին, որը ապօրինի կերպով գործում է մինչ օրս: Ավելին, Թուրքիայի նեղ քաղաքականության արդյունքում բոլշևիկները ստեղծեցին Ադրբեջանը, վերջինիս կազմի մեջ որպես հիքնավար մարզեր մտցնելով նաև Հայաստանի մաս կազմող Նախիջևանն ու Արցախը՝ քաջ գիտակցելով, որ ներկա սահմանների մեջ, առանց դեպի ծով ելքի, Հայաստանի գոյատևումն ու զարգացումը մեծ չափով կախված է լինելու հարևանների բարեհամոթությունից:

Հանդիպմանը ներկա էր և ՌԻ սպաների առջև ոգեշունչ ելույթ ունեցավ այս միջոցառման անմիջական կազմակերպիչ, «Վասպուրական-Նոր սերունդ» հայրենակցական միության նախագահ Մարինե Վահրադյանը:

## Բուժծառայության լեյտենանտ Գ. Արրահամյան



Ուդրու Ռիլսոն



Քարտեզում պատկերված է Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը, որն ամրագրել է ԱՄՆ Նախագահ Ուդրու Ռիլսոնը իր Իրավաբար վճռով, և ճանաչել են մի կողմից Բրիտանական Կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Հայաստանը, Բելգիան, Հունաստանը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան և Չեխոսլովակիան, իսկ մյուս կողմից՝ Թուրքիան (Սևրի դաշնագիր, 10 օգոստոսի 1920թ.): Ինչպես երևում է քարտեզից, այն Հայաստանի համար նախատեսված է ելք դեպի Սև ծով, ինչպես նաև Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթները: